

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2011թ. հունվարի 18-ի նիստի

Ներկա էին՝ պատմ. գիտ. թեկն. **Անուշավան եպս. Ժամկոչյան** (խորհրդի նախագահ), պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Ա. Յ. Բայյան** (խորհրդի քարտուղար), պատմ. գիտ. թեկն., դոց. **Ա. Է. Հովհաննիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Ռ. Հ. Վարդանյան**, իր. գիտ. դոկտ., պրոֆ. **Գ. Ս. Ղազինյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Հ. Գ. Ավետիսյան**, պատմ. գիտ. դոկտ. **Լ. Ա. Սարգսյան**, փիլ. գիտ. թեկն., դոց. **Ա. Գ. Քալաշյան**, փիլ. գիտ. թեկն., ասիստ. **Գ. Ա. Սարգսյան**, փիլ. գիտ. դոկտ. **Հ. Հ. Քեռուեյան**, ասիստ. **Ժ. Վ. Պապոյան**, պատմ. գիտ. թեկն. **Ս. Ս. Մկրտչյան**, պատմ. գիտ. թեկն., ասիստ. **Ա. Գ. Մանուչարյան**, դսի. **Գ. Հ. Ղուչյան**, ասպիրանտ **Ա. Մ. Մարմարյան**, ուսանող **Լ. Ռ. Ադամյան**:

ԼՍԵՑԻՆ. – Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու **Լիզա Ռուբենի Քարիմյանին** դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը (զեկ.՝ պրոֆ. Ռ. Հ. Վարդանյան):

Զեկուցողը նշեց, որ Կրոնի պատմության և տեսության ամբիոնը 2010թ. դեկտեմբերի 22-ի նիստում քննարկել է Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Լիզա Ռուբենի Քարիմյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը, և հաշվի առնելով, որ հայցողի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին, պատմ. գիտ. թեկն. **Լ. Ռ. Քարիմյանին** երաշխավորել դոցենտի գիտական կոչում շնորհելու համար և **միջնորդել ֆակուլտետի մրցութային հանձնաժողովին ու խորհրդին՝ առաջարկելով հաստատել ամբիոնի նիստի որոշումը և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին շնորհել դոցենտի գիտական կոչում (ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքը կցվում է):**

Աստվածաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովը 2011թ. հունվարի 18-ի նիստում քննարկել է խնդրո առարկա հարցը, և ուսումնասիրելով հայցողի անձնական գործի նյութերը՝ արձանագրել է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետը նախատեսում է դոցենտի գիտական կոչում շնորհել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձանց,

ովքեր գիտական կոչում շնորհող բուհում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 տարվա ստաժ և վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու Լիզա Ռուբենի Քարիմյանին գիտական կոչում շնորհող բուհում՝ ԵՊՀ-ում, երեք տարի անընդմեջ իրականացնում է մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Դոցենտի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման և ՀՀ ԲՈՀ-ի նորմատիվ այլ ակտերի պարտադիր պահանջներից է նաև թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում առնվազն 3 հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքների առկայությունը:

Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո (2009թ.) Լ. Ռ. Քարիմյանը կրոնագիտության և հայ եկեղեցու պատմության ոլորտում հրատարակել է գիտական 3 հոդված և ուսումնամեթոդական 1 ձեռնարկ:

Պատմական գիտությունների թեկնածու Լ. Ռ. Քարիմյանի գիտամանկավարժական բարձր որակի և հմտության անատարկելի վկայություններից մեկն էլ դասավանդման որակի և արդյունաբերության վերաբերյալ անցկացված ուսանողական հարցումներն են, որոնց միջինը կազմում է 4,8:

Հաշվի առնելով այդ ամենը՝ Աստվածաբանության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովն արձանագրում է, որ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանը լիովին արժանի է դոցենտի գիտական կոչման և առաջարկում է ֆակուլտետի խորհրդին՝ նրան շնորհել դոցենտի գիտական կոչում:

Այնուհետև պրոֆեսոր Ռ. Հ. Վարդանյանը ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի քննարկմանը դրեց Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- պատմ. գիտ. թեկն. **Անուշավան Էսյս. Ժամկոչյան,** պատմ. գիտ. դոկտ. **Լ. Ա. Սարգսյան,** պրոֆ. **Ռ. Հ. Վարդանյան,** դոց. **Ա. Գ. Քալաշյան,** ասիստ. **Ժ. Վ. Պապոյան,** փիլ. գիտ. դոկտ. **Հ. Հ. Քեոսեյան:**

Արտահայտվողները միահամուռ կերպով առաջարկեցին Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը դնել փակ (գաղտնի) քվեարկության:

Խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց փակ (գաղտնի) քվեարկության դնել Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու հարցը և **միաձայն հաստատեց հաշվիչ հանձնաժողովի** (հանձնաժողովի նախագահ՝ փիլ. գիտ. դոկտ. **Հ. Հ. Քեոսեյան,** հանձնաժողովի անդամներ՝ պատմ. գիտ. թեկն., դոց. **Ա. Է. Հովհաննիսյան,** ասպիրանտ **Ա. Մ. Մարմարյան**) կազմը:

Անցկացվեց փակ (գաղտնի) քվեարկություն

ԼՍԵՑԻՆ.- Հաշվիչ հանձնաժողովի նախագահ փիլ. գիտ. դոկ. Հ.Հ Քեոսեյանի հաղորդումը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների մասին:

Փիլ. գիտ. դոկ. Հ.Հ Քեոսեյանը նշեց, որ խորհրդի 17 անդամներից ներկա էին 16-ը, և քվեարկությանը մասնակցել են 16-ը: Բաժանվել է 16 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 16 քվեաթերթիկ:

Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու համար քվեարկել են՝

**կողմ -16
դեմ - չկա
անվավեր քվեաթերթիկ – չկա**

Այսպիսով, ամփոփեց հանձնաժողովի նախագահը, փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ (կցվում է)

2. Հաշվի առնելով, որ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանի գիտամանկավարժական գործունեության տվյալները լիովին համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին» N 615 որոշման 2-րդ՝ «Դոցենտի գիտական կոչում շնորհելը» բաժնի բ) ենթակետի, ինչպես նաև այդ հարցում նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին՝

ա) պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին երաշխավորել դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

բ) միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանին շնորհել դոցենտի գիտական կոչում և համապատասխան առաջարկով դիմել ՀՀ ԲՈՀ:

2. Այնուհետև

ԼՍԵՑԻՆ.- Կրոնի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանի «Կրոնագիտության դպրոցները» «Կրոնների պատմություն» մագիստրոսական ծրագրի երաշխավորության և հրատարակության հարցը (զեկ.՝ փիլ. գիտ. թեկն., դոց. Ա. Գ. Քալաշյան):

Զեկուցողը խորհրդի նիստի քննարկմանը ներկայացրեց պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանի «Կրոնագիտության դպրոցները» «Կրոնների պատմություն» մագիստրոսական ծրագրի երաշխավորության և հրատարակության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- պատմ. գիտ. թեկն. Անուշավան եպս. Ժամկոչյան, պրոֆ. Ռ. Հ. Վարդանյան, գիտ. դոկտ. Լ. Ա. Սարգսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել պատմ. գիտ. թեկն. Լ. Ռ. Քարիմյանի «Կրոնագիտության դպրոցները» «Կրոնների պատմություն» մագիստրոսական ծրագրի երաշխավորության և հրատարակության հարցը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

պ.գ.թ. դոցենտ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊՍ ԺԱՄԿՈՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

պ.գ.թ. Ա. Յ. ԲԱԼՅԱՆ